



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ  
ՈՐՈՇՈՒՄ**

«16» նոյեմբերի 2016 թվականի N:420 - Ա քաղաք Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 16-Ի N:41-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ, 5-րդ մասերի դրույթներով՝

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2012 թվականի փետրվարի 16-ի «Արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասների գնահատման Շիրակի մարզային հանձնաժողով ստեղծելու և հանձնաժողովի աշխատակարգը հաստատելու մասին» N:41-Ա որոշման N:1 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

Իսկականի հետ ճշմարիտ



Հ. ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ  
ՆՈՅԵՄԲԵՐԻ 6-Ի N 120-Ա ՈՐՈՇՄԱՆ

«ՀԱՎԵԼՎԱԾ N 1  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ  
ՓԵՏՐՎԱՐԻ 16-Ի N 41-Ա ՈՐՈՇՄԱՆ

#### ԿԱԶՄ

ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ  
ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

- Սեյրան Պետրոսյան- Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի տեղակալ,  
հանձնաժողովի նախագահ.
- Արթուր Կարապետյան- Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների  
նախարարության աշխատակազմի փրկարար ծառայության Շիրակի  
մարզային փրկարարական վարչության պետ, հանձնաժողովի  
նախագահի տեղակալ.
- Գրիգոր Պապոյան- Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի  
աշխատակազմի քարտուղարության պետ,  
հանձնաժողովի քարտուղար.
- Արամ Անտոնյան- Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի  
աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական  
գործադիր մարմինների հարցերով վարչության պետ,  
հանձնաժողովի անդամ.
- Ալբերտ Մարգարյան- Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի  
աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ,  
հանձնաժողովի անդամ.
- Մովսես Մանուկյան- Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի  
աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության  
վարչության պետ, հանձնաժողովի անդամ.
- Լիպարիտ Մարտիրոսյան- Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի  
աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման  
վարչության պետ, հանձնաժողովի անդամ.

- Հովհաննես Հովհաննիսյան-Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ, հանձնաժողովի անդամ.
- Սիմոն Պողոսյան- Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության «Անասնասանիտարիայի և բուսասանիտարիայի ծառայությունների կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության «Շիրակի մարզային կենտրոն» մասնաճյուղի տնօրեն, հանձնաժողովի անդամ.
- Ստյոպա Սահակյան- Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի աշխատակազմի քաղաքաշինական պետական տեսչության Շիրակի տարածքային բաժնի քաղաքաշինական պետական տեսուչ, հանձնաժողովի անդամ.
- Մարինե Մկրտչյան- Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության աշխատակազմի առողջապահական պետական տեսչության Շիրակի մարզային կենտրոնի պետի տեղակալ, հանձնաժողովի անդամ.
- Կարինե Անդրիասյան- «ԱրմենՏել» փակ բաժնետիրական ընկերության Հյուսիսային Տարածքային կենտրոնի Համակցման ցանցերի շահագործման ուղղության առաջատար ճարտարագետ, հանձնաժողովի անդամ (համաձայնությամբ).
- Աշոտ Ռուշանյան- «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության Շիրակի գազաֆիկացման և գազամատակարարման մասնաճյուղի տնօրենի տեղակալ, գլխավոր ճարտարագետ, հանձնաժողովի անդամ (համաձայնությամբ).
- Հարություն Հակոբյան- «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության «Ղարս» մասնաճյուղի առաջատար ճարտարագետ, հանձնաժողովի անդամ (համաձայնությամբ):»:

«Շիրակի մարզպետարանի  
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ»

Իսկականի հետ ճիշտ է



Խ. ՊՈՂՈՍՅԱՆ